

Բժշկարաններում ձեռագիրներում պարզ-տուժով՝ Կծոյեան Ա. վեր կը հանէ միջ-նադարեան մշակոյթի պատմութեան մէջ նոր դէմք մը՝ Գրիգորիս բժիշկ, ապրած Միւ. Հերացիէն վերջ եւ եւ Արիստակէս կաթողիկոսէն առաջ (էջ 205-220). եւ ա-նոր հեղինակութիւնն է «Քննութիւն բնու-թեան մարդոյս եւ նորին զանազան կրից եւ պատճառանաց հիւանդութեան» երկը (էջ 205-220):

Հ. Փափազեան կը մեկնարանէ Մատե-նադարանի պարսկերէն ձեռագիրներու պատմագրական մեծ արժէքը (էջ 221 - 236), տալով յատկանշական օրինակներ: Հեղինակը արդէն իսկ լոյս ընծայած է Ա. հատոր մը, եւ շուտով Բ. հատորն ալ հրապարակ պիտի ելլէ:

Ս. Դաւթեան կը քննէ Մատենադարանի Թ. 6774 ձեռագրի ասղնեղործ շապիկը որ հայ արուեստի ուշագրաւ նմոյշ մըն է (էջ 237-240):

Ա. Մարտիրոսեան կը ներկայացնէ Մարտիրոս Ղըրմեցիի մէկ չափածոյ ա-նէժքը եւ անոր տարբերակը, ուր դժբախ-տաբար սխալ եւ կարգէ դուրս տեղեկու-թիւններ կը ներկայացուին Արծիւեան կա-թողիկոսի մասին, հիմնուելով դարձեալ հին աղբիւրներու վրայ (էջ 241-246):

Ռ. Աբրահամեան կը հրատարակէ երկու փոքր վաւերագիր՝ «Հնդկաստանի մէջ Մ. Նալբանդեանի կատարած աշխատանքի մասին» (էջ 247-249):

Ա. Աղամեան կու տայ «Նոր նիւթեր Պերմ Պոռնեանի մասին», քաղելով անոր նամակներէն (էջ 251-264):

Բնագրեր եւ քարգմանութիւններ բաժ-նին մէջ Լ. Խաչիկեան կը հրատարակէ, հանդերձ ուսումնասիրութեամբ, Կոս-տանդին Բարձրբերդցիի «Խրատական քուպ»ը, քաղելով Լենինկրատի պետա-կան հանրային գրադարանի ձեռագրական բաժինէն (էջ 267-284):

Հ. Բարթիկեան կու տայ հետաքրքրա-կան «Նոր նիւթեր Կիլիկիայի հայկական պետութեան եւ Բիզանդիայի փոխյարա-բերութիւնների մասին» (էջ 285-295),

հրատարակելով ԺԲ. դարուն՝ Գրիգոր Դ. Տղայ եւ Կոստանդին Դ. կաթողիկոսներու եւ Յունաց կայսեր միջեւ եղած թղթակ-ցութեանց բնագիրներ:

Ս. Արեւշատեան կը հրատարակէ Յով-հաննէս Երզնկացիի իմաստասիրական մէկ աշխատութիւնը, զոր ինք Պլուզի եւ ոչ թէ Ծործորեցիի կը վերագրէ (էջ 297-315). հետաքրքրական է բնագրին օտար, մանա-ւանդ արարելէն բառերով խճողուած ըլ-լալը, ինչպէս Փէրիզ, Ղիսս, Ղամեր, քուլք. որով հրատարակիչը կցած է նաեւ օգտաշատ բառարան մը:

Ռ. Աբրահամեան լոյս կ'ընծայէ Հրմո-կաստանի ուղեցոյց մը, կազմուած ԺԲ. դարուն, հայ հեղինակի մը կողմէն. բնա-գրին հետ տրուած է նաեւ ուսանելի թարգմանութիւնը (էջ 317-328):

Ա. Պապովեան կու տայ «Անսիլք Ան-տիոքայ» օրինագրերին ուսանելի թարգ-մանութիւնը (էջ 329-375):

Մատենագիտութեան բաժինն մէջ, Լ. Մելքիսէթ-Յէկ կու տայ «Յուսոյի հայե-րէն ձեռագրաց վրաստանի կենտրոնական պատմական արխիւի», վերջին էջերուն մէջ ամփոփելով ընդհանուր տախտակը (էջ 377-425):

Շ. Շահնադարեան, «Մատենագիտական նորոյթներ» խորագրին տակ կը ներկայա-ցընէ Երեւանի Պետ. Մատենադարանի մէջ պահուած 10 հին տպագրութիւններ, ո-րոնք անծանօթ մնացած են ցարդ մատե-նագիտական հրատարակութիւններու մէջ:

Հայերէն եւ ուսանելի ցուցակով կ'ա-ւարտի հատորը, որ ամէնէն վերջ կը թո-ղու խոր տպագրութիւն՝ ի տես այն հըս-կայ վաստակին որ տեղի կ'ունենայ Երե-ւանի Պետ. Ձեռագրատան մէջ, որու նը-կարագրութեամբ սկսած էր հատորը:

Յօդուածներու բաժինն գլխաւորաբար արժէքաւոր կը մնան Սեբէոսի մասին յայտնաբերուած նորութիւնը, Խորենացիի պատմութիւնն սկսած լոյսը, Գրիգորիսի բժշկարանը: Բնագիրներու հրատարակու-թեամբ կը ճոխանայ մեր մշակոյթի պատ-մութիւնը:

Միակ թերութիւնը որ կը նշմարուի կարգ մը ուսումնասէրներու քով՝ առար-կայականութեան պակասն է, որով ինչ ինչ պատմական հարցերու կը մօտենան կանխակալ մտայնութեամբ մը, եւ մինչեւ իսկ զիւրութեամբ շեղումներ կը կատա-րեն՝ կաթողիկէութեան եւ պապականու-թեան դէմ խօսելու. եւ երկրորդ՝ արդի իրենց չըջանալի մտայնութեամբ կը ջա-նան դադափարաբանել մեր միջնադարեան մշակոյթին ու զեղարուեստը (մանրանկար եւն...), ինչ որ կ'աղօտացնէ հարազատ պատկերը մեր տոհմային արժէքներուն: Ասոնք պատմական եւ մեկնաբանական մե-թոտի կարեւոր հարցեր են, որ անշուշտ առարկայ կը դառնան Հայաստանի ու-սումնասէրներու ուշադրութեան:

Մատենադարանի «Բանբեր»ը իսկապէս մշակութային սուրհանդակ մըն է, հայա-գիտական նորանոր նուաճումներու լրա-բեր. կը մաղթենք որ մնայ ու յարատեւէ իր այս բարձր դերին մէջ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



ՄԵՐ ԳԻԻՂԸ ԴԱՏԵՄ: Խմբագրութեամբ եւ յառաջարկով Գ. Մխիթարեանի: Ութածալ, արուեստական կաշեկազմ, էջ 256, նկարազարդ: Պոսքըն, 1958:

Հայրենակցական հրատարակութեանց շարքին ահա համեստ հատոր մը եւս Խա-րբրդի դաւառին այս փոքր զիւղին՝ Դա-տեմի մասին, հրատարակուած. Դատեմի Լուսաւորչական Ուսումնասիրաց Ընկե-րութեան կողմէ:

Հատորը աւելի յօդուածներու շարք մըն է, խնամքով համադրուած Գ. Մխիթա-րեանէ: Հոն գրեթէ Դատեմի անցեալին մասին ամէն նիւթ մշակուած է, պատմա-կանէն սկսելով:

Շատ բան ծանօթ է զիւղին հնագոյն անցեալին մասին: Երկու գրչութիւններով ծանօթ է Յակոբ գրիչ, 1628էն:

Դժբախտաբար կը պակսին Դատեմի հը-նադարեան վանքին լուսանկարը, արձա-նագրութիւնները (եթէ կային) եւ նման ուրիշ պատմական, հնախօսական նիւթե-րը: Կը պակսի նոյնիսկ աշխարհացոյց մը, զիւղին յատակադիւր. հրատարակիչները դժացած են լու զիւղին համայնապատկե-րին մէկ անորոշ արտատպութեամբ:

Այսուհանդերձ յուլիչ բան մը կայ Դա-տեմի վերապրողներուն այս զեղեցիկ եւ սրտարուղիս ճիւղին մէջ՝ իրենց հանգած վանքն ու զիւղը պահ մը վերապրեցնելու՝ հին օրերու վերջիւումներուն փշրանքնե-րով, որոնք քանի մը կարճ տարիներ վերջ ալլեւս պիտի դադրէին վերջիւումներ ըլ-լալէ:

Գովելի ու զնահատելի է վերապրող Դատեմցիներուն փութկոտութիւնը՝ իրենց պապեանական զիւղին յաւերժացման նը-ւիրուած այս հատորը հրատարակելու: Իր համեստ եւ ցուցամոլութենէ բոլորովին հեռու երեւոյթով եւ պարունակութեամբ՝ կարծես յանդիմանութիւն մը ըլլար այն հայրենակցական մեծածաւալ եւ շնորհալից ձեռնարկներուն, ուր բոլորին երեւալու տխուր ցանկութեամբ դործերը ծայրայեղ-օրէն խճողուած են: Նոյն ատեն յանդիմա-նութիւն մըն է նաեւ այն հայրենակցու-թեանց՝ որոնք հին սերունդին վերջալոյսի այս օրերուն՝ դեռ զիտակից չեն իրենց պարտականութեան, մամուլին տալու ի-րենց բնավայրին մասին ինչ որ փրկուած հասած է իրենց:

Գնահատելի է Դատեմցիներու աղնիւ ձեռնարկը, երբ մանաւանդ նկատի ունիմ Երզնկացիներու (Եկեղեցաց դաւառ) ափ-սոսալի անտարբերութիւնը, որուն պատ-ճառաւ նոյնիսկ հրատարակուելու ծախսե-րուն դոնէ տպագրականը չուղեցին կամ չկրցան տրամադրել, քանի մը անհատնե-րու բացառութենէն զատ:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ: Գրեց Մ. Մկրեան:
Փոքր ութածալ, լաթակազմ, էջ 308,
նկարազարդ: Երևան, 1955: Գին՝ 7
ռուբլի 35 կոպեկ:

Որքան որ ցայտուն նորութիւններով չի
լուսարաներ Նարեկացւոյ ստուերամած
կեանքը, այնուհանդերձ Մկրեան մեզի կու
տայ շահեկան աշխատութիւն մը մեր
մեծագոյն խորհրդապաշտ բանաստեղծի
կեանքին, գործին ու ժամանակին մասին:
Եթէ մէկ կողմ թողունք համայնափարա-
կան տեսութեանց եւ ըմբռնումներու տուր-
քը՝ որոնք մեզի համար արուեստական եւ
խորթ կը մնան, Մկրեանի գործը այլապէս
լաւագոյն ստուերագիրն է, որ ցարդ ու-
նինք Նարեկացիի մասին առ հասարակ:
Անտարակոյս Գարեգին Պատրիարք Սրբա-
ղանի կոթողային երկը՝ Նարեկացւոյ եւ իր
գործին վրայ, միշտ պիտի մնայ մեծար-
ժէք աշխատութիւն մը, գնահատելի ամէն
կերպով:

Մկրեանի ուսումնասիրութիւնը բնա-
կանաբար ունի վիճելի շատ կէտեր եւ տե-
սութիւններ, որոնցմով կարելի չէ զբաղիլ
զրախօսականի մը սուղ սահմաններուն
մէջ: Այնուհանդերձ տանք օրինակ մը. էջ
72, Մկրեան առնելով Ստեփանոս Օրպէ-
լեանի 915 թուին Յուրայի կամ Յուրա-
բերդի բնակչութեան յարձակումը եւ կո-
ղովուտը Տաթևի վանքին, ասիկա կը վե-
րադրէ գիւղացիական ըմբոստութեան՝ ա-
ւատականութեան եւ անոր դաշնակից (իր
ըմբռնումով) եկեղեցականութեան դէմ:
Դասակարգային կոիւ կը տեսնէ հոն: Սա-
կայն ոչ իսկ թեթեւ ճիգ մը՝ նախ պոու-
զելու համար թէ Յուրաբերդի բնակիչնե-
րը հա՞յ էին թէ մասմեոսական աղղով:
Սակայն եթէ նոյնիսկ հայ ըլլային, ի՞նչ-
պէս կարելի է վանքի մը հարստութեանց
կողովուտը դասակարգային ընդգրկում նը-
կատել: Մկրեան հակասութեան մէջ ալ
կ'իյնայ երբ կը խորհի որ Տամալէկս գիւ-
ղին բնակիչները Տաթևի վանքին պատու-

հաս եղեր են, ըստ իրեն՝ յանուն դասա-
կարգային ապստամբութեան, ընդդէմ կե-
ղեքիչ վանականութեան: Սակայն հակա-
սութիւնը հոն է որ գիւղը նոյնիսկ վանքին
կալուածը չէ, եւ Սմբատայ կին թաղուհի
Սոփիան է որ գիւղը գնելով՝ վանքին կը
անկախանայնէ: Անկէ վերջ ընդգրկումն ալ
կը գաղբի:

Մկրեան կը նկարագրէ Աղթամարի եկե-
ղեցւոյն քանդակները (էջ 96-97): Ըստ իս՝
այդ քանդակները պատկերացումներն են
ժամանակին լաւ ծանօթ առակներու եւ
մանրամասնութիւն, որոնք մեզի այժմ անծա-
նօթ կը մնան կամ ուսումնասիրութեամբ
չեն ստուգարանուած:

Մկրեան իր գործին էջ 176ին վրայ կու
տայ յիշատակարանը Երեւանի թիւ 2929
մեծարժէք ձեռագիրին, որ Նարեկի մեզի
հասած մէկ օրինակն է, գրուած 1257
Կիլիկիա: Ան կու տայ յիշատակարանին
մէկ մասը սապէս.

«... Բայց գրեցաւ սա ի հռչակաւոր մեծ
անապատիս որ Դրաղարկ վերածայնի,
ընդ Հովհաննես սուրբ աստուածածնիս
... եւ այլն»:

Անտարակոյս յիշատակարանին ընդդը-
ծած մասս սխալ ընթերցման արդիւնք է
եւ պէտք է սրբադրել ընդ հովհաննէս սուրբ
Աստուածածնիս...: Հովհաննէս անտա-
րակոյս պիտի գրուէր Յով վայն ատեն:

Կը փակեմ զրախօսականս, յանձնարա-
րելով աշխատութիւնը իբր ընտիր գործ
մը եւ շահեկան: Յաւալի է որ գոնէ ինծի
հասած օրինակին թուղթը վատորակ է եւ
տպագրութիւնը դէշ: Մկրեան՝ հակառակ
որ Նարեկի նման զմայլելի հեղինակի մը
եւ անոր սքանչելի հայերէնին մասին կը
խօսի, խղճի անխմանալի հանդարտու-
թեամբ մը խաթարած է մեր լեզուն ֆոն,
մոտիվ, կոմպոզիցիա (ասոնք միայն եր-
կու տողի մէջ, էջ 96), մասսա, փեռտալ,
միստիկայ (նոյնպէս էջ 75), ափսիւմ,
ռիթմ, էսքետիկ, եւն. անհարադատու-
թիւններով:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

○ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԷՆ ○

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԷԶՄԻԱՅՆԷՆ

(10 Ապրիլ, 1959)

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Աւագ Սե-
ղանի վերակառուցման առթիւ, Վեհա-
փառ Հայրապետի սիրալիր համաձայնու-
թեամբ, Երեւանի Գիտութիւնների Ակա-
դեմիան պեղումներ կատարեց Ս. Սեղանի
բեմի տակ, ղեկավարութեամբ ճարտ. Ալ.
Սահինեանի:

Սոյն թուի Ապրիլի Տին Երեւանից հրա-
ւիրուած հնագէտների եւ ճարտարապետ-
ների յանձնաժողովը տեղում քննելով պե-
ղումների արդիւնքները, հաստատեց հե-
տեւեալը.

1. — Այժմեան Ս. Սեղանի տակ, մօտ
1,5 մէր խորութեան, յայտնաբերուեցին
Ե. դարում, Վահան Մամիկոնեանի կող-
մից կառուցուած Աւագ Սեղանի խարխու-
ղները, բեմը եւ Վէմ քարը պահպանուած
անաղարտ վիճակում:

2. — Ե. դարի բեմի որոշ սրբատաշ քա-
րերի վրայ պահպանուած են հնագոյն որ-
մանկարների մնացորդներ:

3. — Ե. դարի Ս. Սեղանի կառուց-
ուածքի ներսում պահպանուած են առա-
ւել հնագոյն խորանի պատեր, որոնք ըստ
իրենց կառուցուածքի եւ շինարարական
տեխնիկայի՝ զոյգութիւն են ունեցել մինչեւ
Ե. դարը: Այդ կարող է լինել Ս. Գրիգոր
Լուսաւորչի օրով (301 թ.) կառուցուած
խորանը կամ թերեւս պատկանել է առաւել
հնագոյն շրջանի սրբավայրի:

4. — Ե. դարի բեմի ներքեւի շարժ-
ուածքի մէջ, հորիզոնական ուղղութեամբ,

յայտնաբերուած է Ուրարտական ժամա-
նակաշրջանի (2-8 դար Բ. ա) մի սրբա-
տաշ որձաքարից (քաղալո) յղկուած մի
մեծ կոթող, որը եւ հաւանում է (3,10×0,
73×0,53 մ.) հանդիսանում է ցարդ յայտ-
նի Ուրարտական կոթողներից ամենա-
մեծը:

Այդ հնագիտական յուշարձանը վկայում
է Մայր Տաճարի ստեղծումից աւելի քան
մէկ հազարամեակ առաջ, Ս. Էջմիածնի
շրջապատում, թերեւս Ուրարտական ժա-
մանակաշրջանից զոյգութիւն ունեցող՝ մը-
շակութային կեանքի կենտրոնի առկայու-
թիւնը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց հը-
նագէտ-ճարտարապետների առաջարկու-
թիւնները, այն է.

1. — Մայր Տաճարի նոր կառուցուելիք
Աւագ Սեղանի մակերեսը պատել երկաթ-
բեթոնով, պահպանելով բեմի տակ պե-
ղումների հետեւանքով ներկայիս առաջա-
ցած դեմնափոր տարածութիւնը իր անց-
քերով եւ Ս. Սեղանի ետեւի կողմից (Թան-
գարանից) յատուկ մուտք բանալ ընդհա-
նուր դիտման համար, որպէս սրբավայր
եւ պատմական յուշարձան:

2. — Ուրարտական որձաքար կոթողը
զուրս հանել իր տեղից եւ կանգնեցնել Ս.
Էջմիածնի բակում մի յարմար տեղ, յա-
տուկ պատուանդանի վրայ, իրբեւ յուշար-
ձան-կոթող: